

Ծ Ւ Ա Ծ Ա Ն

ՔԱՂԱՔԱԿԱՆՔ, ՆՈՐԱԼՈՒՐՔ ԵՒ ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ՏԵՍՈՒԹԻՒՆ Ա.ԲՏԱ.ԲԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑԻՑ.

Եւրոպայի ընդհանուր եւ մեծամեծ քաղաքական խնդիրները գեռ ամենեւին նշան մը չեն ցուցըներ շուտով լուծուելու։ Գաղղիացոց զօրքը Հռոմէն ենելու կարծես թէ միտք ալ չունին, թէպէտ եւ Գաղղիոյ տէրութեան մարդիկը կուզեն եւ կըսեն անդադար թէ պէտք է որ իրենց զինուորները տեղերնին դառնան։ — Նմանապէս Աւստրիան Մաճառ-ներուն կամքը կատարելու գործ մը չցուցընելն ի զատ, իւր լուծը Մաճառսամին վլրայ աւելի ալ ծանրացընելու հետ է։ — Հերսէկովինայի խոռովութիւնը բաւական հոգ եւ զբաղմունք կուտայ եօմէր փաշային, թէպէտ եւ յաղթութիւնը հարկաւ Օսմանեան բանակին կողմն է։ — Ամերիկայի քաղաքական պա-

տերազմը քանի կերթայ սաստկանալու վլրայ է, եւ ասոր վնասը օրէ օր աւելի զգալի է Անգղիոյ եւ Գաղղիոյ մեծամեծ գործարաններուն վրայ, որ իրենց գործուածքներուն բամպակը Ամերիկայի Միացեալ նահանդաց հարաւային գաւառներէն կառնուն գլխաւորապէս։

Սուրկի նեղութիւնը, ինչպէս որ ամէն տեղ՝ նոյնպէս եւ աւելի կիմացուի օրէ օր Գաղղիոյ տէրութեան մէջ, ուր նափոլէնի կայսերութիւնէն ի վեր տէրութիւնը ամէն տարի 500 միլիոն ֆրանքի պարտք կաւելցընէ։ ըսել է թէ մինչեւ ցայդմ 5000 միլիոնէն աւելի եղեր է պարտքը, եւ չգիտցուիր թէ ինչ կերպով պիտի վճարուի։

Ն Ե Բ Ֆ Ի Ն Լ Ա Ի Բ Ե Բ

ԱԵՀԱՍՏԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ ԴՐՈՒԵԼԸ.

Լեհաստանի թագաւորութիւնը, ինչպէս որ յայտնի է, Կայսերական Հրամանով՝ հոկտեմբերի 2-էն ի վեր պատերազմական օրինաց տակ գրուեցաւ։ Այս բանիս պատճառները այս կերպով դրուած են Լեհաստանի փոխարքայ Լամպէրթ կոմսին յայտարարութեանը մէջ, զոր կհամառօտեմք։

« Բնակիչքդ թագաւորութեան Լեհաստանի թորմէշետէ այս թագաւորութեան կառավարութիւնը ինձ յանձնուեցաւ, կյուսայի թէ կարողանամ այս երկրիս մէջ վլրգութեան իսպանական պատրիարքութիւնը նորէն հաստատել « հեղութեան ճանապարհով։ Հասարակաց բարեկարգութեան թշնամիները կերեւի թէ տէրութեան քաղցրութիւնը ոչ թէ նորաբարի գիտաւորութեանցը տալով, հապաւարի գիտաւորութեանցը որէ օր իրենց յանդինութիւնը կաւելցընեն։ Գուհիկ խաժամութը

« խումբ խումբ կմըտնէ բռնութեամբ խա- « զաղասէր քաղաքացւոց տները, խանութներ « կրանայ, գործարաններ կկոխէ, եւ մաճնա- « ւորապէս այս տեղ բնակութեամբ հաստա- « տուած օտարականները կկողոպաէ, ուրիշ- « ներուն վրայ եւս վախ ձգելով՝ կջանայ այն- « չափ ափարակետել ամէն վիճակի ու ամէն « աստիճանի մարգկանց վրայ՝ որ մինչեւ ե- « պիսկոպոսական սուրբ աստիճանէն ալ չը- « պատկառիր։ Բարեկարգարանէն ոչ միայն « պատիւը չպահուիր, այլ եւ ամէն օր նա- « խատինքներ կլինին։ Զօրքը վրայ կհանի որ « կարգ ու կանոնը պահպանէ, եւ ժողովուր- « գը յիշոցներով կենէ գիմացը։ Ամէն տեղ « կտարածուին վերջին աստիճանի խոռվա- « բար ու ժողովուրգը գրգռով յայտարարու- « թիւներ։ Եկեղեցական արարողութեանց « պատրուակով՝ քաղաքական խոռվաթեան 40